ՍԱՐԻԵՏԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱՋՈՅԱՆ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության կարևորագույն և ամենադինամիկ ճյուղերից է: Դրա զարգացման արագ տեմպերը, արտարժույթի ստացման մեծ ծավալները ակտիվորեն ներգործում են տնտեսության մյուս ճյուղերի վրա և նպաստում զբոսաշրջային ինդուստրիայի ձևավորմանը: Ներկայումս զբոսաշրջային նպատակներով մարդկանց տեղաշարժերն ընդգրկում են պմբողջ աշխարհը, դրանց միջոցով տարբեր երկրների մարդկանց շփումը դարձել է ամենօրյա իրականություն: Զբոսաշրջությունը տնտեսության վերակառուցման ամենահեռանկարային ճյուղերից է, որը խթանում է տնտեսության այնպիսի ճյուղերի զարգացումը, ինչպիսիք են առևտուրը, տրանսպորտը, կապը, գյուղատնտեսությունը, շինարարությունը, սպառողական ապրանքների արտադրությունը: Զբոսաշրջությունը բացի երկրների տնտեսական աճի վրա ներգործելուց, ազդում է նաև դրանց սոցիալական, մշակութային և բնապահպան գործունեության վրա:

Զբոսաշրջության զարգացման համար կարևոր նախադրյալներ են բնական ռեսուրսները և պատմամշակութային հուշարձանները: Բնական ռեսուրսներն իրենց մեջ ներառում են հողը, ծովերը, լճերը, գետերը, լանդշաֆտները, կլիման, ֆլորան և ֆաունան: Սրանք բնութագրում են երկրի աշխարհագրական դիրքը և որոշիչ դեր են կատարում միջազգային զբոսաշրջային հոսքերի համար: Այսպես, հոյակապ ծովային լողափերի և արևային կլիմայի առկայությունը ծնում են զբոսաշրջային մեծ հոսքեր դեպի Միջերկրական և այլ ծովերի երկրների հանգստավայրեր: Այդ տեսանկյունից զբոսաշրջային զարգացած երկրներ են Ավստրիան, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Շվեյցարիան, Ճապոնիան: Որոշ երկրներ էլ ունեն յուրահատուկ զբոսաշրջային ռեսուրսներ, արտասովոր բնական տեսավայրեր /Նիագարայի ջրվեժը՝ ԱՄՆ-ում, Ջոմոլունգմա լեռը՝ Նեպալում և այլն/, մշակութային հուշարձաններ /փարավոնների բուրգերը՝ եգիպտոսում, Թաջ Մահալը՝ Հնդկաստանում, Ակրոպոլիսը՝ Հունաստանում, Կոլիզեումը՝ Իտալիայում և

այլն/[1]: Յուրօրինակ բնական ռեսուրսների և պատմամշակութային բարձրարժեք հուշարձանների առկայությունը մի շարք երկրների հնարավորություն է տալիս նրանց մենաշնորհային դիրք գրավել այդ ոլորտում և խթանում է զբոսաշրջիկների մեծ մասի այցերը այդ երկրներ: Մեր հանրապետությունում զբոսաշրջիկների թիվը տարեցտարի ավելանում է: Այս փաստը վկայում է այն մասին, որ չնայած դժվարին սոցիալ-տնտեսական պայմաններին՝ Հայաստանում կան զբոսաշրջության զարգացման բոլոր անհրաժեշտ նախապայմանները: Զբոսաշրջային գործունեության ընթացքում անխուսափելիորեն տեղի է ունենում շրջակա միջավայրի փոփոխություն: Ներկայումս շրջակա միջավայրի պահպանման և դրանց բարելավման հիմնախնդիրները կարևոր տեղ են զբաղեցնում ամբողջ աշխարհում: Նախկինում քիչ ուշադրություն էր հատկացվում զբոսաշրջային գործունեության ազդեցությանը շրջակա միջավայրի փոփոխման վրա, մասնակիորեն՝ ուսումնասիրվում էր զբոսաշրջության կամ նրա առանձին ձևերի ազդեցությունը միայն երկրագնդի որոշակի կետերում:

Զբոսաշրջության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա կարող է լինել ուղղակի, անուղղակի և խթանող, ինչպես նաև դրական և բացասական: Զբոսաշրջությունը չի կարող զարգանալ առանց շրջակա միջավայրի հետ փոխազդեցության, սակայն զբոսաշրջության զարգացման, կառավարման և հստակ պլանավորման միջոցով հնարավոր է կրճատել բացասական ազդեցությունը և ավելացնել դրականը: 20-րդ դարի 70-ական թվականների վերջերին և 80-ական թվականների սկզբներին հետազոտողները նշեցին զբոսաշրջության բնական միջավայրի վրա ունեցած բացասական ազդեցության մասին: Զբոսաշրջային արտադրանքի ծավալի քանակական աճի տեմպերի նվազումը և հասարակական «էկոլոգիական» գիտակցության ուժեղացումը արևմտաեվրոպական երկրներում 80-ական թվականների կեսերին պայմանավորեցին զբոսաշրջության անցումը զարգացման նոր մեթոդի: Ամբողջ աշխարհում բանավեճ սկսվեց տնտեսության մեջ զբոսաշրջության օգուտների և վնասների, բնապահպանության և հասարակության վերաբերյալ, այն դեպքում, երբ նախկինում խոսքը գնում էր միայն տնտեսության մասին: Զբոսաշրջության մեթոդաբանության զարգացման մեջ զգալի ներդրում կատարեցին շվեյցարական և արևմտագերմանական գիտնականները՝ Ի. Կրիպպենդորֆը, Ռ. Յունկը և

---

1. Папирян Г. А. Международные экономические отношение. Экономика туризма, М.:„Финансы и статистика„ 2000г., ст. 23

Խ. Վայսը: 1975 թվականին շվեյցարացի Ի. Կրիպպենդորֆը առաջին անգամ բարձրացրեց բնական միջավայրի վրա զբոսաշրջության զարգացման բացասական հետևանքների հիմնախնդիրը. 1980 թվականին տպագրվում են Ռ. Յունկի, իսկ 1981թվականին Խ. Վայսի հոդվածները[2]: Վերջին տարիներին լույս են տեսնում մի շարք գիտական աշխատություններ նվիրված զբոսաշրջության սոցիալական և բնապահպանական հիմնախնդիրներին: Կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա ձևավորվում և աճող նշանակություն է ստանում, այսպես կոչված, «փափուկ» զբոսաշրջության հայեցակարգը: Միջազգային զբոսաշրջության դրական ազդեցությունը ներառում է պատմական հուշարձանների պահպանությունը և վերականգնումը, ազգային այգիների ստեղծումը, լողափերի և ծովային ժայռերի պաշտպանությունը, անտառների պահպանումը, արգելանոցների ստեղծումը և այլն: Բազմաթիվ զարգացող երկրներում, այդ թվում նաև ՀՀ-ում անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով ոչ մի լուրջ քայլ չի կատարվել բնության և շրջակա միջավայրի պահպանության և պաշտպանության ուղղությամբ: Ավելին՝ սոցիալական դժվարությունների պատճառով տարիներ շարունակ անխնա կերպով կտրատվել են անտառները, ոչնչացվել է կենդանական աշխարհը, ավերվել են բնական և պատմական հուշարձանները: Իսկ զբոսաշրջությունից ստացվող եկամուտները ներդրվել են տնտեսապես ավելի շահութաբեր ոլորտներ: Շրջակա միջավայրի վրա զբոսաշրջության ազդեցությունը գնահատելու ժամանակ կարևոր է, թե ինչ տեսանկյունից է այն գնահատվում, քանի որ այն, ինչը ըստ զբոսաշրջիկի դրական է, կարող է բացասական լինել տեղական բնակչության համար: Օրինակ՝ արգելանոցների ստեղծումը կարող է արոտավայրերի կրճատման, հետևաբար՝ սննդամթերքի արտադրության կրճատման պատճառ դառնալ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ զբոսաշրջության բացասական ազդեցությունը հաճախ, ավելի շատ է լինում: Մասնավորապես, այն ազդում է գետերի, լճերի, ծովերի ջրի , ինչպես նաև օդի որակի վրա, վերջինս աղտոտվում է տրանսպորտային միջոցների արտանետումներից: Անհայտ ճանապարհներով Հայաստան ներկրված էժանագին և անորակ բենզինի այրումից մթնոլորտ է թափանցում տետրա-

[2] Сапрунова В. Б. Туризм: эволюция, структура, маркетинг, М.: „Ось-89„1997г., ст. 49

մեթիլկապար գազը, որը ոչ միայն սպառնում է շրջակա միջավայրին, այլև քաղցքեղի առաջացման պատճառ կարող է դառնալ: Բացասական հետևանքներից է նաև ժամանցի առանձին հաստատությունների գործունեությունից առաջացող աղմուկը, զբոսաշրջիկների կողմից տեղանքի գիշատչաբար օգտագործումը, կանաչ տարածքների ոչնչացումը, խարույկների վառումը, որը ներկայումս գրեթե ավանդություն է դարձել ՀՀ տարածքում զբոսնողների համար: Քիչ չեն նաև պատմական և բնական հուշարձանների քայքայման երևույթները՝ դրանցից քարեր պոկելու, դրանց վրա ստորագրություններ թողնելու հետևանքով և այլն: Նոր հյուրանոցային համալիրների և դրանց ենթակառուցվածքների շինարարությունը Սևանի լողափերին և քաղաքային այգիների շրջակայքում բացասաբար է ազդում բնական միջավայրի վրա: Բնական միջավայրի վրա ազդում են նաև զբոսաշրջության վրա ուղղակի ազդեցություն չունեցող ոլորտներ, որը նույնպես պետք է հաշվի առնել: Անհրաժեշտ է շրջակա միջավայրի պաշտպանության նպատակով իրականացնել զբոսաշրջային քաղաքականություն երկարատև ժամանակաշրջանի համար: Սակայն, շատ երկրներ, հատկապես զարգացողները, որոնց թվում նաև ՀՀ, առավելապես կողմնորոշվում են կոմերցիոն և ֆինանսական շահի ստացման ուղղությամբ: Զբոսաշրջային որոշ վայրերում վատ են գործում նորմատիվային ակտերը, իսկ բնապահպան կառույցները ընդհանրապես բացակայում են: Սակայն շրջակա միջավայրի պաշտպանությունը ապահովող իրավական դաշտի բացակայությունը չպետք է խոչընդոտի երկրում զբոսաշրջության պլանավորման գործընթացին: Զբոսաշրջության զարգացման քաղաքականության մեջ բնապահպան գործունեության հետզհետե ընդգրկումը առավել արդիական է դառնում: Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպությունը հատուկ ծրագրեր է առաջարկում շրջակա միջավայրի պաշտպանության ուղղությամբ, քանի որ շրջակա միջավայրի պահպանումը և պաշտպանությունը ավելի պարզ և էժան միջոց է, քան հետագայում հասցված վնասների հետագա փոխհատուցման ծախսերը:

Բնության վրա ներգործելուց բացի, զբոսաշրջիկները, հյուրընկալ երկրի բնակչության հետ շփումների արդյունքում թողնում են նաև սոցիալ-տնտեսական ազդեցություն: Այն կարող է լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական: Դրական կարելի է համարել մշակութային տեղեկատվության փոխանակումը: Զբոսաշրջիկների հետաքրքրությունը երկրի մշակութային

ժառանգության նկատմամբ կարող է տեղական բնակչության մոտ հպարտության և պատասխանատվության զգացումներ առաջացնել՝ խթանելով պահպանել իրենց ազգային սովորույթներն ու արհեստները: Բացասական ազդեցությունը հաճախ արտահայտվում է ուղիղ շփման հետևանքով, բայց կարող է առաջանալ նաև զբոսաշրջության անհամաչափ զարգացման ու հնարավորությունների ոչ արդյունավետ օգտագործման հետևանքով:

Այսպիսով՝ զբոսաշրջության զարգացման բնապահպանական ուղին պայմանավորված է մարդու կողմից այն փաստի գիտակցմամբ, որ զբոսաշրջության ոչ համամասնական զարգացումը կարող է խարխլել հենց իր գոյության հիմքերը, քանի որ՝

- զբոսաշրջությունը սպառում է բնական ռեսուրսները,
- մասսայական զբոսաշրջության կենտրոններում բնական ռեսուրսների սպառման գործընթացը առավել գիշատիչ բնույթ է ստանում,
- բնական միջավայրի խարխլումը իր հետ բերում է նաև զբոսաշրջային արտադրության անկում /զբոսաշրջության մոնոմշակույթի հիմնախնդիրներ/:

Իսկ զբոսաշրջության փոխադարձ կապը բնական միջավայրի հետ հիմնականում հանգում է հետևյալ հարաբերություններին՝

- զբոսաշրջությունը կեղտոտում է շրջակա միջավայրը /զբոսաշրջության նպատակներով բնական ռեսուրսների օպտիմալ օգտագործում/,
- զբոսաշրջությունը պահպանում է շրջակա միջավայրը /բնության և մշակութային հուշարձանների պահպանում և պաշտպանում, զբոսաշրջիկների մոտ բնապահպան հանդուրժողականության դաստիարակում, զբոսաշրջային ծառայությունների մատուցում և այլն/,

Բնական միջավայրը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում զբոսաշրջության գոյության համար /մարդու կենսագործունեության միջավայրի որակը, զբոսաշրջային առաջարկի բնական գործոնները, զբոսաշրջային արտադրության ազդեցության բնույթը և այլն/: Շրջակա միջավայրի բնապահպանական քաղաքականության գիտակցումը ենթադրում է բնության և հասարակության անխախտ միասնությունը: